րաբիա[յ][1] մինչեւ ցԱնապատն Արաբիա, մինչեւ ցկրկ[ո]ւածն[2] Եփրատա[յ] յարեւելս կոյս, հանդէպ Թափսակ քաղաքի, եւ գետովն ի [28բ] *վեր մինչեւ ցԱմանոս[3] լեառն, որ բաժանէ ըստ հիւսի՛սո[յ][4] զԿիլիկէա եւ զԿապադովկիա[5], այսինքն՝ զՓոքր Հայս՝ յԱսոր[ւ]ոց[6], ի Կոմագէնէ աշխարհէ փոքուէ:*
191 *Քանզի ունին Ասորիք[7] փոքր աշխարհս ի-նն[8]. զգրե[ա]լդ[9], յորում՝ քաղաք Շամուշատ, եւ զԿիւռիստիկի[10], յորում՝ քաղաք Հերապոլիս[11], որ է Մաբուն[12]. եւ Բեռիա, որ է Խազազ[13].* [զ]*Ք[ա]լ*^{ի}*-կիդիկի[14], յորում՝ քաղաք Քալկիսա, որ է Նկորիա, եւ Աւագն Անտիոք[15]՝ իւր զատուցեալ աշխարհա-ւն, որ կոչի Սե[լե]ւկիա[16]. զԱպամիս, յորում՝ քա-ղաք Ապամիա, եւ Եպիփանիա[17], որ է Հեմաթ, եւ Եմածա[յ] եւ այլք. զԿասիոտի, յորում՝ Առատող[18] կղզի. զԿիւլիսիւռիա, յորում՝ Դամասկոս քաղաք. զԲադանա[յ]՝ ըստ անապատի. զՊալմի[ր]ունի[19], յորում է Հաւարին քաղաք՝ ըստ Անապատ Արա-բ[ի]ո[յ][20]. եւ զԲալբանիտիս՝ ըստ Եփրատա[յ]:*

192 *Ունին լերինս զՊիեռա[յ], զԿայսիմոն[21], զԼիբանանոս, զԱնտոլիբանանոս[22], որ է Սանիր, զԱսլամոս[23], զԿարմեղոս, եւ գետս անուանիս՝ զՈ-ւէնտիս, որ բղխէ ի Լիբանանէ, անցանելով առ Ե-պիփանով՝ մտանէ ի ծով՝ հուպ յԱւագն Անտի-ոք[24]. եւ Ելեւթռոս, որ ասի Ազատ գետ, եւ նա ե-լանէ ի Լիբանանէ եւ մտանէ [ի][25] ծով՝ մերձ յ*[29ա]*Անդանդոն[26] քաղաք. եւ Ադոնիս, որ եւ նա*

---

1 *VS* Արաբիա *փխ* Արաբիա[յ] *(վեր.՝ սեռականով)*

2 *V* ցկրկւածն, *S* ցկրկնուածն *փխ* ցկրկ[ո]ւածն *(վեր., հմմտ. նախորդիւ, նախ. Գ.20, Ե.112* («մին-չեւ ցնոյն **դարձուածն** Եփրատայ»)*)*

3 *S* զԱմանուս *փխ* զԱմանոս *(V)*

4 *V* հիւսիւսո *փխ* հիւսիսոյ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

5 *V* զԿապատոկիա *փխ* զԿապադոկիա *(վեր. Սուք-րեանի՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ե.50, 52, 190)*

6 *VS* յԱսորոց *փխ* յԱսոր[ւ]ոց *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

7 *V-ում ձախ լուսանցքում ուշ ձեռագրով, 2 տո-ղով, երկար պատուոյ նշանների մէջ «ծանօթա-գրուած» է.* «աշխարհ / ասորոց» *(առաջին բառը գրուած է՝* **ա** *եւ ալիքաձեւ գաղափարագիր)*

8 *V* թ̅

9 *V* զգրեղդ *փխ* զգրեալդ *(վեր. Սուքրեանի, ով նա-եւ տողատակում ծանօթագրել է՝* «Յօր. *զԳրեղդ.* այլ թուի համառօտեալ *զԳրեալդ*, ակնարկելով ի նախագրեալն Կոմագենի, որոյ արդարեւ քաղաք գլխաւոր էր Շամուշատ». *հմմտ. նաեւ գրաւոր* **Լ** → **Ղ** → **Լ***)*

10 *V* զԿիւռիմտիկի *փխ* զԿիւռիստիկի *(վեր. Սուք-րեանի. ըստ Երեմեանի՝* զԿիւռեստիկէ*)*

11 *S* Հերոպոլիս *փխ* Հերապոլիս *(V. վերջին 2 բա-ռերի վերեւում դրուած է օղակաձեւ նշան եւ ձախ լուսանցքում ուշ ձեռագրով, նոյն նշանի եւ մի ոլորազարդի տակ 26 տողով, յաճախակի պա-տուագրումներով «ծանօթագրուած» է.* «փիլ^{հ}պ^{ո}ս առ^{ա}ք^{եա}լ / առ ծովեզր^{եա}յս / շրջ^{եա}լ առ սահ/մանօ-քն՝ անդ/աքայ ի մըմբէջ / որ է յարապօլ/իս որ կո-չի ք^{ա}ղ^{ա}ք / ք^{ա}հ^{անա}յից: պատմ/ագրաց գտաք / Եւ յետ քակել/ոյն ի նեքաւ/ովէ ի մնբէջ / ք^{ա}ղ^{ա}քի շի-նեցօ / յաթուրաց/ոցն. և եդօ ա/նդ. կուռքն / կանա-նայ և / կոչեցաւ յարայ/պաւլիս / որ թարքմա/նի ք^{ա}հ^{անա}յից քաղ^{աք} / վ^{ա}սն քրմացն / կախարդ^{ա}ցն. / աթուրացոց երկիրն / նինուէէ սահմանացն է:»*)*

12 *S* Մաբուկ *փխ* Մաբուն *(V)*

13 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* Խա[լիւբոն եւ Ա]զազ *փխն.* Խազազ*)*

14 *V* քլիկիգիկի, *S* Լիկիդիգի *փխ* [զ]Ք[ա]լ^{ի}կիդիկի *(վեր. ըստ Սուքրեանի մի դիտարկման* ([զ]-*ն՝ ըստ միւսների), ով չի նկատել* Խազազ-*ին յա-ջորդող* **ք**-*ն, բայց ծանօթագրել է՝* «*Քալկիդիգի* պիտի». *հմմտ. նաեւ բոլորագիր* **դ** → **գ***)*

15 *V* Անդիոք *փխ* Անտիոք *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդների, օր.՝ նախ. Ա. 29, 33, Ե.22. բայց այս* **դ**-*ով ձեւը կրկնւում է նաեւ յաջորդ նախ. մէջ)*

16 *V* Սեւկրա *փխ* Սելեւկիա *(վեր. Սուքրեանի, որը տողատակում ծանօթագրել է՝* «Յօր. *Սեւկրա*», *տե՛ս* Սելե... *եւ ուշ երկաթագիր* **Ւ** → **Ր***)*

17 *V* Եպրփանիա *փխ* Եպիփանիա *(վեր. Սուքրեա-նի. տե՛ս երկաթագիր* **Ւ** → **Ր** *եւ յաջորդ նախ.-ը)*

18 *V* Առատսղ, *S* Առատոզ *փխ* Առատող *(վեր., տե՛ս բոլորագիր* **ո** → **ս***)*

19 *V* զՊալմիունի *փխ* զՊալմիրունի *(վեր. Սուքրեա-նի, որը տողատակում ծանօթագրել է՝* «Յօր. *Պալմիունի*», *տե՛ս ուշ երկաթագիր* **ԻՐ** → **Ի***)*

20 *V* Արաբո *փխ* Արաբիոյ *(վեր. Սուքրեանի, տե՛ս ուշ երկաթագիր* **ԲԻ** → **Բ***)*

21 *S* զԿասիմոն *փխ* զԿայսիմոն *(V. գրիչը* **յ**-*ն տեղա-ւորել է բառի տակ)*

22 *VS* զԱնդոլիբանանոս *փխ* զԱնտոլիբանանոս *(վեր., տե՛ս բարբառային* **Տ** → **Դ** → **Տ***)*

23 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* զԱ[ղ]սա[դա]-մոս

24 *V* Անդիոք *փխ* Անտիոք *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ա. 29, 33, Ե.22. նոյնն էր եւ նա-խորդ նախադասութեան. մէջ)*

25 *V չիք* ի *(վեր. Սուքրեանի. հմմտ. 4 տող անց եւն)*

26 *Ըստ Երեմեանի՝ վերակ-նելի է* յԱնդա[ռա]դոն